ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ:

ԹԱՄԱՆԱԿԱՑՄԱՆ



ԵՐԵՎԱՆ - 2002

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՅԵԼԵՏ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱՐՏԱԿ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ: ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (1897-2001 ԹԹ.):

Ա II 87091

Խմբագիր՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյան

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 2002

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
REPUBLIC OF ARMENIA
THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARTAK H. HOVHANNISYAN

MIDDLE EAST PEACE PROCESS CHRONOLOGY (1897-2002's)

Editor, Professor N. Hovhannisyan

EREVAN- 2002-

Հովհաննիսյան Ա.: Ժամանակագրություն: Խաղաղության գործընթացը Մերձավոր Արևելքում: (1897-2002թ.): Երևան 2002 թ.:- 40-էջ:

Սույն ժամանակագրությունը որոշակի գաղափար և պատկերացում է տալիս արաբա-իսրայելական հակամարտության և խաղաղության գործընթացի շուրջ ծավալված դեպքերի և ժամանակի փաստագրական իրադարձությունների մասին:

Նախատեսված է միջազգայնագետների, արևելագետների և ընթերցող լայն հասարակության համար:

Երկու խոսք

Արդեն հինգ տասնամյակից ավել Մերձավոր Արևելքում շարունակվում է արաբա-իսրայելական հակամարտությունը: Այդ ընթացքում տեղի են ունեցել հինգ պատերազմներ և տասնյակից ավելի տեղական մաշտաբի զինված բախումներ: Դրանց հետևանքով զոհվել են հազարավոր մարդիկ, իսկ հարյուր հազարավորները լքել են իրենց բնակավայրերը:

Համաշխարհային հասարակայնությունը փորձեր է անում լուծումներ գտնել և հակամարտող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու միջոցով հասնել հակամարտության վերջնական կարգավորմանը:

Խաղաղության գործընթացի ընթացքում եղել են ինչպես մեծ նվաճումներ, այնպես էլ տեղատվություններ և վայրէջքներ: Խաղաղության գործընթացին հատկապես խանգարել են ահաբեկչական գործողությունները և Իսրայելի կողմից իրականացվող բռնությունները: Ստորև ներկայացվում են խաղաղության գործընթացին առնչվող առավել կարևոր դեպքերն ու իրադարձությունները:

1897 թ.

Օգոստոսի-29-31- Թ. Հերցլը կազմակերպում է Բազելի կոնգրեսը, հաստատվում է սիոնիստական գաղափարախոսությունը:

1915 թ.

Հոկտեմբերի 24- պայմանագիր Մեքքայի շերիֆ Հուսեյնի և անգլիական զորքերի հրամանատար Հենրի Մակմահոնի միջև, ըստ որի Անգլիան պարտավորվում էր աջակցել արաբական ապստամբությանը թուրքական տիրապետության դեմ և պատերազմից հետո ճանաչել արաբական անկախ պետությունը:

1916 թ.

Մայիս- Սայքս-Պիկո գաղտնի համաձայնագիրը, ըստ որի առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Անգլիայի տիրապետության տակ էին անցնելու Իրաքը և Պաղեստինը, իսկ Ֆրանսիայի՝ Սիրիան և Լիբանանը:

1917 թ.

Նոյեմբերի 2- Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Բալֆուրի հռչակագիրը՝ Պաղեստինում հրեաների համար ստեղծել ազգային օջախ:

1918թ.

Օգոստոսի 31- ԱՄՆ-ը ճանաչեց Բալֆուրի հռչակագիրը:

1920 թ.

Պաղեստինում և Հորդանանում հաստատվեց Մեծ Բրիտանիայի մանդատը, իսկ Սիրիայում և Լիբանանում՝ Ֆրանսիայի:

1922թ.

ԱՄՆ-ի կոնգրեսը հայտարարեց, որ հավանություն է տալիս Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծման ծրագրերին:

1939 թ.

Մայիս- բրիտանական կառավարությունը հրապարակեց իր հայտնի «Սպիտակ գիրքը», որում ասվում էր, որ հրեական պետության ստեղծումը Պաղեստինում չի հանդիսանում իր վարած քաղաքականության մի մասը:

1942 թ.

Մայիսի 8- ԱՄՆ-ի պետքարտուղարության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ Էլլինգի մեմորանդումը: ԱՄՆ-ի հետաքրքրությունները Մերձավոր Արևելքում բաժանվում էին 3 էլեմենտների՝ քաղաքական, ռազմական և տնտեսական:

Մայիսի 11- Նյու-Յորքի Բիլթմոր հյուրանոցում հրավիրված հրեական 667 պատվիրակներից բաղկացած կոնգրեսը պահանջեց իրականացնել Բալֆուրի հռչակագիրը և Անգլիային տրված մանդատի համապատասխան հոդվածները:

Հրեական կազմակերպությունները խիստ քննադատության ենթարկեցին «Սպիտակ գիրքը»:

1944 թ.

Հոկտեմբերի 15- ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը հայտարարեց, որ «Պետք է գտնել ուղիներ և միջոցներ Պաղեստինում դեմոկրատական հրեական

համագործակցություն ստեղծելու համար, հենց որ դա հնարավոր լինի»:

1945 թ.

Փետրվար- Պաղեստինում գործող հրեական զինված կազմակերպության՝Հագանայի հրամանատարությունը ընդունեց «Ա» ծրագիրը, որը նախատեսում էր չեզոքացնել պաղեստինցի արաբների զինված ուժերը:

1946թ.

Ապրիլ- ստեղծվեց անգլո-ամերիկյան կոմիտե, որը զբաղվելու էր Պաղեստինի հարցերով: Կոմիտեն հայտարարեց, որ. «Ընդունում է Տրումենի առաջարկությունը թույլատրել 100,000 հրաեների մուտքը Պաղեստին, բայց միաժամանակ մերժում է արաբների և հրեաների պահանջը այդ ժողովուրդների համար ստեղծելու ազգային պետություններ:

Հոկտեմբեր- ԱՄՆ-ի նախագահ Տրումենը առաջարկեց թույլատրել 100.000 հրեաների բնակվել Պաղեստինում: Տրումենը հայտարարեց, որ .«հրեական պետության ստեղծումը թույլատրելի է Պաղեստինի այն հատվածում, որը գտնվում է հրեական գաղութաբնակների տնտեսական և քաղաքական ոլորտում: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների:

Դեկտեմբերի 31- մարդահամարի տվյալներով Պաղեստինում ապրում էր 1.972.560 մարդ, որից 1.203.780-ը

արաբներ էին, 145.060-ը՝ քրիստոնյաներ, 15.490-ը՝ դրուզներ և 608.230-ը՝ հրեաներ:

1947 թ.

Ապրիլ- բրիտանական կառավարությունը պաղեստինյան հարցը տեղափոխում է ՄԱԿ:

Ապրիլի 28- մայիսի 15- ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նստաշրջանը ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը պետք է ներկայացներ ծրագրեր պաղեստինյան հարցի լուծման վերաբերյալ:

Մայիս-նոյեմբեր- Հագանան ընդունեց «Բ» և «Գ» ծրագրերը. չեզոքացնել հարևան արաբական երկրների զինված ուժերի աջակցությունը պաղեստինցի արաբներին:

Նոյեմբերի 29- ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ձայների երկու երրորդի առավելությամբ ընդունեց 181-րդ բանաձևը՝ Պաղեստինում անգլիական մանդատը դադարեցնելու մասին: Ըստ այդ բանաձևի Պաղեստինը բաժանվեց արաբական և հրեական մասերի՝ պահպանելով տնտեսական միասնությունը: Երուսաղեմին և Բեթղեհեմին տրվեց միջազգային կարգավիճակ: Բանաձևին կողմ քվեարկեցին 33 երկիր, այդ թվում նաև ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, դեմ քվեարկեցին 14 պետություն, իսկ 10-ը՝ այդ թվում նաև Անգլիան, ձեռնպահ մնացին:

1948 թ.

Մարտ- Հագանան ընդունեց «Դ» ծրագիրը կամ Դալեթի նախագիծը, որը նախատեսում էր մինչև 1948թ. մայիսի 15-ը՝ անգլիական մանդատի դադարեցման օրը, որքան

հնարավոր է շատ տարածքներ գրավել արաբներին տրամադրված տարածքներից:

Մարտ-ապրիլ- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը քննարկեց պաղեստինյան հարցը: ԱՄՆ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ անհնար է իրականացնել ՄԱԿ-ի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումը: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը մտցնել ՄԱԿ-ի հովանու ներքո, որը երկրամասը կառավարելու համար պետք է նշանակեր գեներալ-նահանգապետ:

Ապրիլի 1-Հագանան ձեռնարկեց «Նաչսհոն» գործողությունը, որը նախատեսում էր միջանցք ապահովել Թել-Ավիվի և Երուսաղեմի միջև և բաժանել ապագա արաբական պետության տարածքը երկու մասի:

Ապրիլի 10-իսրայելական զինվորները գրավեցին Երուսաղեմի արևմտյան արվարձանների մոտ գտնվող Դեյր-Յասին արաբական գյուղը, սպանվեց 350, գերի վերցվեց 50 մարդ:

Ապրիլի 12- գրավվեց Երուսաղեմից 6 մղոն արևմուտք գտնվող արաբական Կոլոնիա գյուղը:

Ապրիլի 14-հրեաները իրականացրին «Փիթչֆորկ» գործողությունը և մտան արևմտյան Երուսաղեմ:

Ապրիլի 21- անգլիական հրամանատարությունը հայտարարեց, որ դուրս է բերում իր զորքերը Հայֆա քաղաքից:Մեկօրյա բախումը ավարտվեց հրեաների հաղթանակով և քաղաքի արաբական բնակչության արտաքսումով:

Ապրիլի 27- Հագանան ձեռնարկեց «Չամեթզ» գործողությունը, որի արդյունքում գրավվեցին Յաֆֆային շրջապատող արաբական գյուղերը:

Ապրիլ- Ամերիկյան սենատոր Օստինը առաջարկեց Պաղեստինում ՄԱԿ-ի դրոշի ներքո կամ նրա փոխարեն օգտագործել ԱՄՆ-ի ոստիկանական ուժերը՝ ռազմական գործողությունները կանխելու համար:

Ապրիլ-մայիս- ԱՄՆ-ի նախաձեռնությամբ հրավիրվեց Գլխավոր Ասամբլեայի հատուկ նստաշրջան, որտեղ ԱՄՆ-ը առաջ քաշեց Պաղեստինի ժամանակավոր կառավարման մի շարք ծրագրեր՝ այդ թվում նաև գերագույն կոմիսարի նշանակում:

Մայիսի 13- Հրեական զինված ուժերը գրավեցին Յաֆֆա քաղաքը:

Մայիսի 3-14- արաբներից գրավվեց արևմտյան Գալիլեան՝ Ակրայով հանդերձ, որի արաբական բնակչությունը տեղահանվեց:

Մայիսի 14- Անգլիան հայտարարեց իր մանդատի դադարեցման և զորքերի դուրսբերման մասին:

Մայիսի 14- Հրեական Ազգային Խորհուրդը, հռչակեց Իսրայելի անկախությունը:

Մայիսի 18- Արաբական Լիգայի զորքերը մտան Արևելյան Երուսաղեմ: Հին քաղաքում գերի վերցվեց 1500 հրեա:

Հուլիսի 11- ընկավ արաբական Լուդդա քաղաքը, որը լքեցին 30.000 արաբներ:

Հուլիսի 12- Հրեաները գրավեցին Ռամալա քաղաքը:

Սեպտեմբերի 11- ՄԱԿ-ի 194-րդ բանաձևը կրկին հաստատեց Երուսաղեմի միջազգային կարգվիճակը:

Դեկտեմբերի 11- ՄԱԿ-ի որոշմամբ Իսրայելը պետք է վերադարձներ արաբ փախստականներին իրենց նախկին բնակավայրերը:

1949թ.

Փետրվարի 24- Իսրայելը զինադադարի և զորքերի տարաբաժանման համաձայնագիր ստորագրեց Եգիպտոսի հետ:

Մարտի 23- Համաձայնագրի ստորագրում Լիբանանի հետ:

Ապրիլի 3-Համաձայնագրի կնքում Հորդանանի հետ: Հորդանան գետի արևմտյան ափը՝ շուրջ 5.500կմ^2 տարածք անցնում էր Հորդանանին:

Մայիսի 12- Լոզանում Իսրայելը և արաբական երկրները համաձայնվում են քննարկել ՄԱԿ-ի կողմից նախատեսված սահմանների հարցը:

Հուլիսի 20- Համաձայնագրի կնքում Սիրիայի հետ:

1950թ.

Մայիսի 25- Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը կնքեցին «երեքի համաձայնագիրը», որը նախատեսում էր անսահմանափակ ռազմական օգնության տրամադրում ինչպես Իսրայելին, այնպես էլ արաբական երկրներին:

1951թ.

Հոկտեմբեր- Ռազմական դաշինքի ստեղծման փորձ ԱՄՆ-ի կողմից «միջինարևելյան հրամանատարություն» անունով:

Նոյեմբերի 10- Դեկլարացիա միջինարևելյան հրամանա տարություն ստեղծելու սկզբունքների մասին:

1952թ.

Հուլիսի 23- Կահիրեի զինվորական կայազորի զորամասերի ապստամբությունը («ազատ սպաներ») Գ.Ա. Նասերի գլխավորությամբ: Ֆարուկ թագավորը հրաժարվեց գահից:

Իսրայելում ընդունվեց օրենք «բացակայող տերերի հողերի մասին»: Ցանկացած արաբի հող Պաղեստինում սկսած 1947թ. նոյեմբերի 29-ից կարելի էր բռնագրավել, եթե դրա տերը իր բնակավայրից բացակայում է թեկուզ մեկ օրով:

Վերջ- ԱՄՆ-ի և Իսրայելի միջև կնքվեց ռազմական համաձայնագիր, որին հետևեց «արտակարգ տնտեսական օգնության մասին» համաձայնագիրը: Սրանց զուգահեռ կնքվեցին համաձայնագրեր օդային և ծովային հաղորդակցության, փոխադարձ անվտանգության ապահովման բնագավառներում:

1953թ.

Հոկտեմբեր- ընդունվեց ծրագիր Իսրայելի «ռազմականացման մասին»: ԱՄՆ-ը առաջարկեց ստեղծել նոր ռազմական դաշինք միջինարևելյան երկրների հյուսիսային գոտի անվանումով:

1956թ.

Հուլիսի 26- Եգիպտոսի նախագահ Նասերը հայտարարեց Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման մասին:

Նոյեմբերի 10- Դեկլարացիա միջինարևելյան հրամանա տարություն ստեղծելու սկզբունքների մասին:

1952թ.

Հուլիսի 23- Կահիրեի զինվորական կայազորի զորամասերի ապստամբությունը («ազատ սպաներ») Գ.Ա. Նասերի գլխավորությամբ: Ֆարուկ թագավորը հրաժարվեց գահից:

Իսրայելում ընդունվեց օրենք «բացակայող տերերի հողերի մասին»: Ցանկացած արաբի հող Պաղեստինում սկսած 1947թ. նոյեմբերի 29-ից կարելի էր բռնագրավել, եթե դրա տերը իր բնակավայրից բացակայում է թեկուզ մեկ օրով:

Վերջ- ԱՄՆ-ի և Իսրայելի միջև կնքվեց ռազմական համաձայնագիր, որին հետևեց «արտակարգ տնտեսական օգնության մասին» համաձայնագիրը: Սրանց զուգահեռ կնքվեցին համաձայնագրեր օդային և ծովային հաղորդակցության, փոխադարձ անվտանգության ապահովման բնագավառներում:

1953թ.

Հոկտեմբեր- ընդունվեց ծրագիր Իսրայելի «ռազմականացման մասին»: ԱՄՆ-ը առաջարկեց ստեղծել նոր ռազմական դաշինք միջինարևելյան երկրների հյուսիսային գոտի անվանումով:

1956թ.

Հուլիսի 26- Եգիպտոսի նախագահ Նասերը հայտարարեց Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման մասին:

Հոկտեմբերի 29- 31- Իսրայելը, Անգլիան և Ֆրանսիան ագրեսիա սկսեցին Եգիպտոսի դեմ:

Նոյեմբերի 1- ԱՄՆ-ը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա մտցրեց բանաձևի նախագիծ, որով նախատեսվում էր կրակի դադարեցում և իսրայելական զորքերի դուրսբերում Սինայի թերակղզուց, Ղազայից և էլ-Արիշի շրջաններից, որոնք գրավվել էին ռազմական գործողությունների ընթացքում:

Նոյեմբերի 5- ԽՍՀՄ արտգործնախարարությունը հեռագիր ուղարկեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդ, որտեղ ասվում էր, որ Խորհրդային ղեկավարությունը պարտավորվում է իր լուման ներդնել ագրեսորների սանձման գործում և խաղաղության հաստատման համար Եգիպտոս ուղարկել անհրաժեշտ ռազմա-օդային և ռազմա-ծովային ուժեր:

Նոյեմբերի 6-8 Անգլիան Ֆրանսիան և Իսրայելը հայտարարեցին կրակը դադարեցնելու մասին:

1957թ

Հունվարի 5- «Էյզենհաուերի դոկտրինան»: ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը դիմեց Կոնգրեսին հատուկ ուղերձով, որտեղ խոսվում էր հետայսու Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի «նոր» քաղաքականության մասին:

Հունվարի 9- Իսրայելի կառավարությունը դուրս բերեց իր զորքերը Սինայի թերակղզուց և էլ-Արիշի շրջանից:

Մարտի 7- Իսրայելը դուրս բերեց զորքերը Եգիպտոսի տարածքից և Ղազայի հատվածից:

Մայիսի 21- Իսրայելի կառավարությունը հայտարարեց այդ դոկտրինային իր հավանության և աջակցության մասին:

1958 թ.

Ֆաթհ-ի կամ Պաղեստինյան Ազգային Ազատագրական Շարժման հիմնադրումը Հորդանանում Յասեր Արաֆաթի կողմից:

1960 թ.

Հորդանանցի ուղղափառ քրիստոնյա Նաիֆ Հավաթմեհի կողմից հիմնադրվում է ՊԱԿ-ի մեջ մտնող մյուս ազդեցիկ կազմակերպությունը՝ Պաղեստինի Ազատագրության Դեմոկրատական ճակատը:

1961թ.

Մարտի 5- արաբական երկրները ՄԱԿ-ի Քաղաքական Կոմիտե մտցրին նախագիծ՝ արաբ փախստականների վերադարձի հետ կապված:

1962թ.

ԱՄՆ-ը սկսվեց հրթիռների /հոկ տիպի/ մատակարարումը և ռազմական մասնագետների պատրաստումը Իսրայելի համար:

1963թ.

Վերջ- Իսրայելի կառավարությունը հայտարարեց Հորդանան գետի ջրերի պատնեշման մասին, ինչը ջրային սով առաջացրեց հարևան արաբական երկրներում:

1964 թ.

Հունվարի 13-16- Կահիրեի համաժողովը: 13 արաբական երկրներ առաջ քաշեցին Հորդանանի ջրերի օգտագործման հակածրագիրը:

Ապրիլ- ԱՄՆ-ի Նախագահ Ջոնսոնի հրավերով ԱՄՆ ժամանեց Հորդանանի Հուսեյն թագավորը, որը ներկայացնում էր արաբական երկրների շահերը: Բանակցությունների թեման պաղեստինցի փախստականների վերադարձի և Հորդանանի ջրերի օգտագործման հարցն էր:

Մայիս- Արևելյան Երուսաղեմում Արաբական Լիգայի կողմից, Եգիպտոսի նախագահ Նասերի մտահաղացմամբ ստեղծվում է Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությանը (ՊԱԿ):

1966 թ.

Նոյեմբերի 13- իսրայելական զինված ուժերի հարձակումը հորդանանյան Սամու գյուղի վրան:

1967 թ.

Ջորջ Հաբաշը միավորելով պարտիզանական երեք խմբերի հիմնադրում է Պաղեստինի Ազատագրության Ժողովրդական Ճակատը, որը ներկայացնում է ՊԱԿ-ի ռազմական թևը :

Ապրիլի 5- Իսրայելի արտգործնախարար էբանը հայտարարեց, որ Սիրիայի գործողությունները ենթակա են պատժի:

Ապրիլի 7- Իսրայելի կողմից Սիրիայի դեմ Տիվերի լճի շրջանում ձեռնարկվում է ռազմական գործողություն:

Մայիսի 9- իսրայելական կառավարությունը պառլամենտից պաշտոնական լիազորություններ ստացավ

Սիրիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար: Այդ գործողությունների սկսման օր նշանակվեց մայիսի 17-ը:

Մայիսի 15- Իսրայելը խախտելով ՄԱԿ-ի որոշումը և Հորդանանի հետ կնքված համաձայնագիրը՝ Երուսաղեմում անցկացրեց ռազմական շքերթ:

Մայիսի 18- ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի դեսպանները տեղեկացվեցին այն մասին, որ եգիպտական զորքերի տեղակայումը Սինայում ստիպում է Իսրայելին ուժեղացնել իր պաշտպանունակությունը:

Մայիսի 21- Իսրայելում սկսվեց մասնակի զորահավաք:

Մայիսի 28- Եգիպտոսը հայտարարեց ինչպես իսրայելական, այնպես էլ օտարերկրյան նավերի առաջ Աքաբայի ծովածոցը փակելու մասին:

Հունիսի 5- Իսրայելի պաշտպանության նախարար Դայանը հրաման տվեց սկսել ռազմական գործողությունները:

Հուլիսի 14- ՄԱԿ-ը 99 ձայնով դատապարտեց Իսրայելի կողմից Երուսաղեմի կարգավիճակը փոխելու հանգամանքը:

Նոյեմբեր- ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկեց 4 բանաձևերի նախագծեր, որոնք մտցրել էին ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան, Հնդկաստանը, Մալին և Նիգերիան:

Նոյեմբերի 22- ՄԱԿ-ի ԱԽ-ը ընդունեց 242-րդ բանաձևը, որը հիմնված էր անգլիական տարբերակի վրա:

Դեկտեմբեր- ՄԱԿ-ի ներկայացուցիչ Գ. Յարինգը նշանակվեց տարածաշրջանում ՄԱԿ-ի լիազոր ներկայացուցիչ:

1968թ .ՊԱԿ-ի Ազգային Խորհուրդը ընդունեց Ազգային Խորհրդի կանոնադրությունը, որում առավել կարևորվում է 22-րդ հոդվածը՝ կապված Իսրայելի որպես պետության վերացման հարցի հետ:

1969թ.

Գարուն- Իսրայելը խիստ մեծացրեց իր ռազմական գործողությունների մաշտաբները Սուեզի ջրանցքի շրջանում, որոնք ստացան «պատերազմ մինչև հյուծում» անվանումը:

Դեկտեմբեր- ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոջերսը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր «Վաշինգտոնը ճիշտ չի համարում, որ հակամարտության կարգավորումը արտացոլի կամ ազդի բոլոր նվաճումների վրա»:

1970թ.

Սեպտեմբեր 1- Հորդանանի տարածքում հաստատված պաղեստինյան զինվորական խմբավորումների և հորդանանյան բանակի միջև սկսվեց զինված բախում:

Սեպտեմբերի 3- Հորդանանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Սիրիան մարտական պատրաստականության բերեց զորքերը ՊԴՇ-ին աջակցելու համար:

Սեպտեբերի 19- ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնի ցուցումով արևմտյան Գերմանիայում տեղակայված ԱՄՆ-ի զորքերը բերվեցին մարտական պատրաստականության, իսկ 6-րդ նավատորմը սկսեց շարժվել Միջերկրականի արևելյան ափերը:

Ա 8'2091

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Սեպտեմբերի 20- սիրիական տանկերը Պաղեստինի Ազատագրության Բանակի տարբեանշաններով մտան Հորդանան:

Սեպտեմբերի 28- Կահիրեում ուժի մեջ մտավ կրակը դադարեցնելու մասին համաձայնագիրը, սիրիական տանկերը հեռացան:

Դեկտեմբեր- Իսրայելի վարչապետ Մեիրի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց Վաշինգտոնում, որ համապարփակ կարգավորման ուղիների փնտրումը կդադարեցվի և փորձ կարվի հասնել եգիպտա-իսրայելական սեպարատ հաշտության կնքման:

1972թ.

Սեպտեմբեր- ԱՄՆ-ը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշման նախագծի վրա վետո դրեց: Այդ նախագիծը դատապարտում էր Իսրայելի նոր ռազմական գործողությունները Լիբանանի դեմ:

1973թ.

Հոկտեմբեր 6- Եգիպտոսը սկսեց պատերազմ Իսրայելի դեմ:

Հոկտեմբերի 14- ԱՄՆ-ը սկսեց զենքի զանգվածային տեղափոխում Իսրայել:

Հոկտեմբերի 9-12- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը քննարկեց ստեղծված իրադրությունը:

Հոկտեմբերի 20- ԱՄՆ-ի նախագահը դիմեց Կոնգրեսին՝ խնդրելով շտապ կարգով 2.2 մլրդ դոլարի օգնություն հատկացնել Իսրայելին:

Հոկտեմբերի վերջ- արաբական երկրների հայտարարեցին նավթային էմբարգո:

Հոկտեմբերի 22- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունվեց 338-րդ բանաձևը:

Դեկտեմբերի 21- Ժնևում գումարվեց կոնֆերանս:

Դեկտեմբերի 21- համաձայնություն ձեռք բերվեց իսրա յելական և եգիպտական զորքերի բաժանման և երկու կողմերի միջև բանակցությունները շարունակելու վերաբերյալ:

1974թ.

Հունվարի 11-18- Կահիրե-Սուեզ խճուղու 101-րդ կմ-ի վրա ստորագրվեց զորքերի տարաբաժանման վերաբերյալ իսրայելա-եգիպտական համաձայնագիրը: Իսրայելը հետ քաշեց իր զորքերը Սուեզի ջրանցքից 32 կմ արևելք

Ռաբաթում կայացած արաբական երկրների գագաթաժողովը ՊԱԿ-ը ճանաչեց պաղեստինյան ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ: Ընդունվեց ՊԱԿ-ի՝ այպես կոչված փուլային ծրագիրը, որը նախատեսում էր՝ զինված պայքարի ընթացքում ստեղծել ազգային իշխանություն Իսրայելից ազատագրված ցանկացած տարածքում:

1975թ.

Սեպտեմբերի 1- Ժնևում սկսվեց նոր կոնֆերանս, արաբա-իսրայելական հակամարտության կարգավորմանը նվիրված:

Սեպտեմբերի 4- Եգիպտոսը և Իսրայելը ստորագրեցին Սինայի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իսրայելական զորքերի հետքաշում, Միլթա և Գիդի լեռնանցքների անցում Եգիպտոսին: Եգիպտոսը իրեն վերադարձրեց Սինայի 10%-ը:

1977թ.

Փետրվարի 14- ԱՄՆ-ի պետքարտուղար Վենսը այցելեց Իսրայել և արաբական երկրներ:

Փետրվարի 23- Վենսը ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության Խորհրդի նիստում զեկուցեց իրավիճակի մասին:

Հոկտեմբերի 1- հրապարակվեց Մերձավոր Արևելքի վերաբերյալ խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարություն: Հայտարարությունում նշվում էր, որ պետք է անհապաղ և համապարփակ լուծումով կարգավորել արաբա-իսրայելական հակամարտությունը:

Սեպտեմբերի 25- իսրայելական զորքերը ներխուժեցին հարավային Լիբանան, սակայն ԱՄՆ-ի նախագահ Քարտերի կտրուկ պահանջից հետո, հետ քաշվեցին այդտեղից:

Հոկտեմբերի 21- Քարտերը խոսակցություն ունեցավ Սադաթի հետ:

Նոյեմբերի 14- CBC հեռուստածրագրով տեղի ունեցավ անուղղակի երկխոսություն Բեգինի և Սադաթի միջև:

Նոյեմբերի 19- Եգիպտոսի նախագահ Սադաթը ուղևորվեց Երուսաղեմ և ելույթ ունեցավ Քնեսետում:

Դեկտեմբեր- Սիրիան, Լիբանանը, Ալժիրը, Իրաքը, Եմենը և ՊԱԿ-ը ստեղծեցին «հակազդեցության և դիմադրության ճակատ»:

Դեկտեմբերի 5- Եգիպտոսը խզեց այս երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները:

1978թ.

Հունվար- ԱՄՆ-ը վերջնականապես կանգնեց եգիպտա-իսրայելական սեպարատ հաշտություն կնքելու դիրքերի վրա՝ պաշտոնապես հրաժարվելով համապարփակ կարգավորումից:

Մարտ- Վաշինգտոնում տեղի ունեցած Բեգին-Քարտեր հանդիպման ժամանակ, ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ Իսրայելի պահանջները հանգում են « 6 ոչերի»:

Ապրիլի 27- Աֆղանստանում հեղափոխությունը իշխանության գլուխ բերեց պրոխորհրդային ուժերին, ապա Իրանում տապալվեց ամերիկամետ շահական վարչակազմը:

Սեպտեմբերի 5- ԱՄՆ-ում, Քեմփ-Դևիդում Իսրայելի և Եգիպտոսի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին 13 օր:

Սեպտեմբերի 13- ԱՄՆ-ի նախագահ Քարտերի առաջարկով 242-րդ բանաձևից որոշվեց հանել «պատերազմի միջոցով տարածքներ գրավելու անթույլատրելիություն» արտահայտությունը: 242-րդ բանաձևի տեքստը պարզապես կցվեց «Մերձավոր Արևելքում հաշտության պայմանագիր կնքելու շրջանակներ» փաստաթղթին:

1979թ.

Մարտի 26- Վաշինգտոնում տորագրվեց խաղաղության պայմանագիր Եգիպտոսի և Իսրայելի միջև:

Դեկտեմբերի 25- Պայմանագիրը վավերացվեց և ուժի մեջ մտավ :

1980թ.

Հուլիսի 30- Իսրայելի «հիմնական օրենքով» անեքսիայի ենթարկվեց Երուսաղեմը: Միաժամանակ Իսրայելը 2 ռազմական գործողություններ ձեռնարկեց արաբական երկրների դեմ:

Ամառ- Իսրայելը հարված հասցվեց միջուկային հետազոտությունների իրաքյան կենտրոնին և ռմբակոծեց Բեյրութը:

1981թ.

Փետրվարի 2- ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանը հայտարարեց, որ արևմտյան ափում բնակավայրերի շինարարությունը Իսրայելի կողմից անօրինական է:

Սեպտեմբերի 1- Վաշինգտոնում սկսվեցին իսրայելա-ամերիկյան բանակցությունները:

Հոկտեմբեր- ՊԱԿ-ի ներկայացուցչությունը ԽՍՀՄ-ում ստացավ դիվանագիտական կարգավիճակ:

Նոյեմբերի 30- ստորոգրվեց «ստրատեգիական համաձայնության» վերաբերյալ առաջին փաստաթուղթը, որը կոչվում էր «փոխըմբռնման հուշագիր»:

Դեկտեմբերի 14- Իսրայելը պաշտոնապես հայտարարեց Սիրիայի պատկանող Գոլանյան բարձունքների անեքսիայի մասին:

1982թ.

Հունվարի 6- Իսրայելը ներխուժեց Լիբանան:

Հունվարի 7- հատուկ առաքելությամբ Մերձավոր Արևելք ժամանեց ԱՄՆ-ի նախագահի հատուկ ներկայացուցիչ Ֆ. Հաբիբին: Նրա նպատակն էր օգնել Իսրայելին մերձենալու արաբական պահպանողական վարչակարգերի հետ և շարունակել քեմփդևիդյան գործընթացը:

Հունվարի 15- իսրայելական զորքերը շրջապատեցին արևմտյան Բեյրութը:

Ապրիլի 21- Բեյրութը ենթարկվեց զանգվածային ռմբակոծության:

Հունիսի 9- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը ընդունեց 509-րդ բանաձևը , որը պահանջում էր անմիջապես և առանց նախապայմանների իսրայելական զորքերի դուրսբերում Լիբանանից:

Օգոստոսի 2- իսրայելական զորքերը մտան Բեյրութ, ՊԱԿ-ի ջոկատները հեռացան Լիբանանի մայրաքաղաքից:

Սեպտեմբերի 1- ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանի առաջարկած մերձավորարևելյան կարգավորման ծրագրի վրա:

Սեպտեմբերի 29- Լիբանանում ափ իջան ամերիկյան ծովային հետևակները:

1983թ.

Հունվարի 1- ամերիկյան «արագ արձագանքման ուժերը» սկսեցին հանդես գալ «Պենտագոնի կենտրոնական հրամանատարություն» դրոշի տակ:

Մայիսի 17- ԱՄՆ-ը և Իսրայելը Լիբանանին պարտադրեցին անիրավահավասար պայմանագիր:

Հունիս- ԱՄՆ-ը հայտարարեց 1981թ. նոյեմբերի 30-ի «ստրատեգիական համաձայնագրի» գործարկման անհրաժեշտության մասին:

Հոկտեմբերի 18- ԱՄՆ-ի պետքարտուղար Շուլցը ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության Խորհուրդ ներկայացրեց այս առաջարկը:

Հոկտեմբերի 29- Ռեյգանը ստորագրեց 111-րդ դիրեկտիվը, որը նախատեսում էր ռազմական դաշինք Իսրայելի հետ:

Նոյեմբերի 29- Վաշինգտոն ժամանեցին Իսրայելի վարչապետ Շամիրը և պաշտպանության նախարար Արենսը:

1984թ.

Մարտ- Լիբանանի նախագահ Ժմայելը չեղյալ հայտարարեց իսրայելա-լիբանանյան համաձայնագիրը:

1985թ.

Ռմբակոծվեց ՊԱԿ-ի շտաբ-բնակարանը Թունիսում:

1987թ.

Վերջ- Հորդանանի Արևմտյան ափում և Ղազայի հատվածում սկսվեց արաբների ապստամբությունը՝ Ինթիֆադան:

1988թ.

Փետրվար-Ապրիլ- ԱՄՆ-ի պետքարտուղար Շուլցը կոչ արեց Իսրայելի վարչապետ Շամիրին երկկողմանի բանակցություններ սկսել արաբական երկրների հետ արևմտյան ափի և Ղազայի շուրջ:

Հուլիսի 30- Հուսեյն թագավորը հայտարարեց, որ կտրում է իր ադմինիստրատիվ կապերը արևմտյան ափի հետ:

Նոյեմբերի 15- Հորդանանը հրաժարվեց արևմտյան ափի հանդեպ իր հավակնություններից՝ հօգուտ պաղեստինյան ժողովրդի:

Նոյեմբերի 15- Ալժիրում Պաղեստինյան Ազգային Խորհուրդը ընդունեց հռչակագիր Պաղեստինի անկախության վերաբերյալ:

Դեկտեմբեր- ՊԱԿ-ի Ազգային Խորհուրդը ընդունեց ՄԱԿ-ի բանաձևերը՝ ահաբեկչությունը դադարեցնելու հետ կապված, ինչպես նաև ճանաչեց Իսրայելի գոյատևման իրավունքը:

1989թ.

Մայիս- Իսրայելի վարչապետ Շամիրը հրապարակում է 5 կետանոց ծրագիր, որը ներառնում էր ընտրություններ արևմտյան ափում և Ղազայում այն ներկայացուցիչների համար, որոնք կբանակցեն ժամանակավոր ինքնավարության շուրջ և կաջակցեն այդ իշխանությանը:

Հունիսի 27- Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհուրդը /ԵԱՀԽ/ ընդունեց Մադրիդի հռչակագիրը:

Սեպտեմբերի 23- Լիբանանի վերաբերյալ սովետա-ամերիկյան համատեղ հայտարարությունը:

Հոկտեմբեր- Եվրոխուրհուրդը ընդունեց Մադրիդի հռչակագիրը:

Հոկտեմբեր- ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյքերը ներկայացնում է Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման 5

կետանոց ծրագիր, որը մերժվում է Իսրայելի վարչապետ Շամիրի կողմից:

Նոյեմբեր- Սիրիան վերականգնում է հարաբերությունները Եգիպտոսի հետ, որը դադարեցրել էր Քեմփ-Դևիդի համաձայնագրի կնքումից հետո:

1990թ.՝

Եվրոխորհուրդը ընդունեց Դուբլինի հռչակագիրը կոչ անելով ՄԱԿ-ի հովանու ներքո հրավիրել կոնֆերանս, որին մասնակցելու էր ՊԱԿ-ը:

Մայիսի 20- Յոթ պաղեստինցի աշխատավորներ Ղազայից սպանվեցին Թել-Ավիվի մոտ իսրայելցի մի զինյալի կողմից:

Բաղդադում հրավիրված արաբական երկրների ժողովը աջակցություն հայտնեց պաղեստինյան ժողովրդին և խիստ դատապարտեց խորհրդային հրեաների բնակեցումը բռնագրավված տարածքներում:

Հունիսի 26- Եվրոխորհուրդը Դուբլինում ընդունեց նոր հռչակագիր Մերձավոր Արևելքի վերաբերյալ: Հռչակագիրը դատապարտում էր Իսրայելի կողմից մարդու իրավունքների խախտումները, բռնությունները և խորհրդային հրեաների բնակեցումը բռնագրավված տարածքներում:

Օգոստոսի 2- իրաքյան զորքերը ներխուժեցին և նվաճեցին Քուվեյթը:

Օգոստոսի 12- Սադդամ Հուսեյնը առաջին անգամ Քուվեյթից իրաքյան զորքերի դուրսբերումը կապեց Հորդանանի արևմտյան ափից իսրայելական զորքերի դուրսբերման հետ:

1991թ.

Հունվար- դաշնակցային զորքերը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ սկսեցին «փոթորիկ անապատում» ռազմական գործողությունը:

Հունվարի 28- Մոսկվայում Բեյքեր-Բեսսմերտնիխ հանդիպման արդյունքը եղավ կողմերի համատեղ հայտարարությունը, որում ասվում էր, որ «Հատուկ նշանակություն ունի անկայունության և հակամարտության ակունքների վերացումը, այդ թվում և արաբա-իսրայելականի»:

Փետրվարի 26- էմիրը վերադարձավ Քուվեյթ:

Հուլիսի 31- ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի նախագահները Մոսկվայում ստորագրեցին հռչակագիր, որտեղ կոչ էր արվում հոկտեմբերին հրավիրել միջազգային խաղաղության կոնֆերանս:

Հոկտեմբերի 8- Բեյքերը Երուսաղեմում մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Բուշը և Գորբաչովը այցելել են Իսրայել, արաբական երկրներ և Պաղեստին՝ հրավիրելու Մերձավորարևելյան խաղաղության կոնֆերանս:

Հոկտեմբերի 19- ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի անունից մասնակցող կողմերը հրավիրվեցին կոնֆերանսի:

Հոկտեմբերի 30- Տեղի ունեցավ կոնֆերանսի բացումը:

Նոյեմբերի 1- ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյքերը կոնֆերանսի փակման խոսքում ասաց. «Խաղաղության գործընթացում նկատվում է լուրջ առաջընթաց, երկկողմանի

բանակցություններ սկսելու որոշումով կատարվել է ճեղքում»:

Նոյեմբերի 3- ուղիղ երկկողմանի բանակցությունների սկսումը Մադրիդում:

Դեկտեմբերի 11- բանակցությունները Իսրայելի և Սիրիայի ու Լիբանանի միջև վերսկսվեցին, իսկ հորդանանա-պաղեստինյան պատվիրակության հետ դրանք հետաձգվեցին ընթացակարգային տարբերությունների պատճառվ:

Դեկտեմբերի 16- չնայած վիճաբանություններին՝ կողմերը որոշեցին շարունակել բանակցությունները:

1992թ.

Հունվարի 6-7- Իսրայելը և հորդանանա-պաղեստինյան պատվիրակությունը լուծեցին ընթացակարգային տարբերությունները,որը հնարավորություն տվեց սկսելու բանակցությունների 3-րդ փուլը:

Հունվարի 28-29- Մոսկվայում սկսվեցին բանակցությունները տարածաշրջանային նշանակության հարցերի շուրջ:

Հունվարի երկրորդ կես- երկրորդ և երրորդ փուլի բանակցությունները շարունակվեցին Լիսաբոնում և Լոնդոնում :

Փետրվարի 24-մարտի 4- Արաբա-իսրայելական բանակ ցությունների 4-րդ փուլը ընթացավ Վաշինգտոնում:

Մարտի վերջ- Վաշինգտոնում տեղի ունեցավ բանակցությունների 5-րդ փուլը:

Օգոստոսի 24- սեպտեմբերի 14- Բանակցությունների 6-րդ փուլում Սիրիան և Իսրայելը հասան նշմարելի առաջընթացի: Առաջին անգամ Իսրայելը խոսեց Գոլանյան Բարձունքներից իր զորքերի մասնակի դուրսբերման հնարավորության շուրջ:

Հոկտեմբեր- Բանակցությունների 7-րդ փուլում Իսրայելը կրկնեց իր պատրաստակամությունը Գոլաններից իսրայելական զորքերի դուրսբերման շուրջ, բայց միաժամանակ հասկացրեց, որ չի նախապատրաստվում հանձնել սրատեգիական կարևոր հենակետերը: Իր հերթին պաղեստինյան պատվիրակությունը կոչ արեց համանման դուրսբերման արևմտյան ափից,Ղազայից և Երուսաղեմից:

Դեկտեմբեր- բանակցությունների 8-րդ փուլում, պաղեստինցիները ուղարկեցին ավելի փոքր կազմով պատվիրակություն, այդ կերպ բողոքելով,որ Իսրայելի առաջարկությունները ինքնավարության վերաբերյալ:

Դեկտեմբերի 17- Բանակցությունները ընդհատվեցին այն բանից հետո, երբ 6 իսրայելցի զինվորներ սպանվեցին պաղեստինցի ծայրահեղականի կողմից: Դրան հետևեց 415 պաղեստինցիների աքսորումը հարավային Լիբանան:

Ապրիլի 27- մայիսի 13- բանակցությունների 9-րդ փուլը: Իսրայելը համաձայնվեց 30 պաղեստինցիների հայրենադարձմանը, ինչպես նաև 1992թ. դեկտեմբերին հարավային Լիբանան աքսորված որոշ պաղեստինցիների վերադարձին:

1993թ

Մայիս 15-հունիս-1- ԱՄՆ-ը բանակցությունների 10-րդ փուլում, առաջարկեց պաղեստինյան պատվիրակությաւնը առանձնանալ հորդանանյան պատվիրակությունից և հանդես գալ առանձին:

Օգոստոսի 26- ՊԱԿ-ը գնալով փոխադարձ զիջման՝ հայտարարեց, որ ինքը կգնա գաղտնի բանակցությունների Իսրայելի հետ մասնակի ինքնավարության շուրջ:

Սեպտեմբերի 9- Օսլոյում, Իսրայելը և ՊԱԿ-ը հայտարարեցին փոխադարձաբար միմյանց ճանաչելու մասին:

Սեպտեմբերի 10- Նորվեգիայի արտգործնախարար Յոհան Յորգեն Հոլսթի միջոցով Արաֆաթը համապատասխան նամակ ուղարկեց Ռաբինին, որից հետո Ռաբինը ստորագրեց ՊԱԿ-ի ճանաչման վերաբերյալ փաստաթուղթը

Սեպտեմբերի 13- Իսրայելի արտգործնախախար Շիմոն Պերեսը և ՊԱԿ-ի գործկոմի անդամ Աբու Աբասը Վաշինգտոնում պաշտոնապես վավերացրին Օսլոյում ձեռք բերված համաձայնությունները:

1994թ.

Մկիզբ- Ամերիկայում ծնված հրեա վերաբնակիչ Բարուշ Գոլդսթեյնը Հեբրոնում կրակ բացեց մզկիթում և նրա շուրջ հավաքված ամբոխի վրա՝ սպանելով 29 և վիրավորելով 150 մարդու:

Ապրիլի 29- Փարիզում ՊԱԿ-ի և Իսրայելի միջև կնքվեց տնտեսական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր, որի առանցքը հանդիսացավ Մերձավոր

Արևելքում չափազանց մեծ կարևորություն ունեցող ջրային ռեսուրսների /արևմտյան ափ և Ղազա/ օգտագործման հարցը:

Մայիսի 4- Կահիրեում կնքվեց համաձայնագիր ՊԱԿ-ի և Իսրայելի միջև, որը նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Ղազայի և Երիքովի շրջաններից: Իսկ մինչև 1999թ. մայիսի 4-ը որոշվելու էր Պաղեստինի վերջնական կարգավիճակի և անկախության հարցը:

Հուլիս- Իսրայելի վարչապետ Ռաբինը և Հորդանանի թագավոր Հուսեյնը կնքեցին խաղաղության պայմանագիր՝ պաշտոնապես վերջ տալով 46-ամյա հակամարտությանը:

Հուլիս 1- Կնքված համաձայնագրերը հնարավորություն տվեցին Արաֆաթին 33 տարուց հետո լեգալ կերպով վերադառնալ Պաղեստին:

Օգոստոսի 24- Իսրայելի կառավարության կողմից Դեննի Ռոտշիլդը, իսկ ՊԱԿ-ի կողմից դոկտոր Նաբիլ Շաաթը էրեցում ստորագրեցին նոր համաձայնագիր: Այն կոչվում էր «Համաձայնագիր իշխանության և պատասխանատվության փոխանցման նախապատրաստության մասին»:

Հոկտեմբերի 14- Օսլոյի նոբելյան մրցանակի կոմիտեն խաղաղության մրցանակ շնորհեց Իսրայելի վարչապետ Ռաբինին, արտգործնախարար Շիմոն Պերեսին և ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթին:

Նոյեմբերի 17- ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան քվեարկեց և ընդունեց բանաձև. «Պաղեստինյան Ժողովրդի ինքնորոշման մասին»: Այն ընդունվեց 124 ձայնով ընդդեմ 2 ձայնի:

1995թ.

Հունվարի 23- Երկու պաղեստինյան զինյալներ սպանեցին 19 և վիրավորեցին 60 իսրայելցու:

Փետրվարի 2- Եգիպտոսի նախաձեռնությամբ, հրավիրվեց տարածաշրջանային ժողով Կահիրեում՝ ՊԱԿ-ի, Իսրայելի և Հորդանանի մասնակցությամբ:

Ապրիլի 9- երկու իսլամական ռազմական խմբեր ռումբեր պայթեցրին Ղազայում՝ սպանելով 8 և վիրավորելով 45 մարդու: Ահաբեկչական գործողությունների համար պատասխանատվությունը իրենց վրա վերցրին Համաս և Ջիհադ կազմակերպությունները:

Հուլիսի 24- Պաղեստինցի մի զինյալ ռումբ պայթեցրեց ավտոբուսի մեջ, որը երթևեկում էր Թել- Ավիվի արվարձաններից մեկով: Սպանվեցին 6 և վիրավորվեցին 32 ուղևոր:

Հուլիսի 25- ձեռք բերվեց խախուտ համաձայնագիր Իսրայելի և պաղեստինցիների միջև՝ վերջիններիս ինքնավարությունը արևմտյան ափում ընդարձակելու շուրջ:

Օգոստոսի 21- պաղեստինցի զինյալը արևմտյան Երուսաղեմում հարձակվեց ավտոբուսի կանգառում կանգնած մարդկանց վրա՝ սպանելով 5 և վիրավորելով 107 մարդու:

Օգոստոսի 27- Կահիրեում ստորագրվեց երկկողմ հայտարարագիր պաղեստինյան կողմին իշխանության հետագա փոխանցման մասին:

Սեպտեմբերի 24- Եգիպտոսի Թաբա քաղաքում ընթացավ հուլիսի 25-ի համաձայնագրի քննարկման 2-րդ փուլը: Իսրայելական կառավարության և ՊԱԿ-ի ներկայացուցիչները համաձայնության եկան իսրայելական զորքերի հետագա դուրսբերման շուրջ:

Սեպտեմբերի 28- Վաշինգտոնում ստորագրվեց «Ժամանակավոր իսրայելա-պաղեստինյան համաձայնագիր արևմտյան ափի և Ղազայի վերաբերյալ», որը դիվանագիտական փաստաթղթերում նաև կոչվում է «Օսլոյի II համաձայնագիր», ըստ որի իսրայելական զորքերը դուրս բերվեցին արևմտյան ափի 6 քաղաքներից և 400 գյուղերից:

Նոյեմբերի 4- Իսրայելի վարչապետ Ռաբինը սպանվեց Թել-Ավիվում մի ծայրահեղականի կողմից, որը Ռաբինի գործունեությունը համարում էր դավաճանական:

1996թ.

Հունվարի 1- Արաֆաթը սկսեց նախընտրական քարոզչությունը՝ կոչ անելով քվեարկել լավագույն թեկնածուների օգտին, նույնիսկ եթե դա կնշանակի քվեարկել ոչ հօգուտ իրեն:

Հունվարի 3- միջազգային դիտորդները ընտրությունները Երուսաղեմում որակեցին խարդախ և կեղծված:

Հունվարի 10- Իսրայելական կառավարությունը սկսեց պաղեստինյան բանտարկյալների ազատ արձակումը՝ համաձայն պայմանագրի:

Հունվարի 21- պաղեստինյան ընտրություններն արդեն ավարտված էին: Ձևավորվեց Պաղեստինյան Օրենսդիր Խորհուրդը, իսկ քիչ ավելի ուշ՝ Գործադիր Խորհուրդը:

Մարտի 6- իսրայելական զինուժը հարձակվեց պաղեստինյան գյուղերի վրա և ձերբակալեց հարյուրավոր պաղեստինցիների՝ Համասի անդամներին գտնելու պատրվակով:

Մարտի 11- Արաֆաթը հայտարարեց, որ ձերբակալել է Համասի 3 առանցքային անդամների:

Մարտ 12- Եգիպտոսի Շարմ-ալ Շեյխ բնակավայրում հրավիրվեց խորհրդաժողով, Որին մասնակցում էին 30 երկրների պատվիրակություններ: ՊԱԿ-ի ներքին անվտանգության վարչության ղեկավար Մուհամեդ Դահլան ներկայացրեց Համասը վերացնելու 5 կետանոց ծրագիր:

Ապրիլի 1- Իսրայելի կառավարությունը հայտարարեց, որ երկրում հանրաքվե կանցկացնի, նախքան պաղես տինցիների հետ խաղաղության պայմանագիր կնքելը:

Ապրիլի 9- Հզբոլլահի մարտիկները հրթիռային կրակ բացեցին Լիբանանին սահմանակից հրեական գյուղերի վրա և հարձակվեցին իսրայելական Քուիրյաթ Շեմոնա քաղաքի վրա:

Ապրիլ 11- իսրայելական նավերը և ուղղաթիռները պատասխան կրակ բացեցին հարավային Լիբանանի վրա, որի արդյունքում էվակուացվեցին 12 գյուղերի բնակիչներ: Իսրայելական բանակը սկսեց «Ձայրույթի պտուղները» գործողություն:

Ապրիլի 27- ԱՄՆ-ի պետքարտուղար Քրիստոֆերը ունեցավ առաջին հաջողությունը: Պերեսը և Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին համաձայնագիր կնքեցին կրակի դադարեցման շուրջ:

Մայիսի 2- Արաֆաթը հանդիպեց Քլինթոնի հետ Սպիտակ տանը:

Մայիսի 5- իսրայելական կառավարությունը և ՊԱԿ-ը վերսկսեցին խաղաղության բանակցությունները:

Հունիսի 5- ԱՄՆ-ի բանավոր համաձայնությամբ Հորդանանում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների գագաթաժողով, որի երկրորդ փուլը կայացավ հունիսի 23-ին Կահիրեում:

Հուլիսի 10- Նաթանյահուն այցելեց ԱՄՆ և հանդիպեց նախագահ Քլինթոնի հետ:

Օգոստոսի 16- Արաֆաթը խնդրեց Քլինթոնին օգնել դադարեցնելու հրեական բնակավայրերի կառուցումը արևմտյան ափում:

Սեպտեմբերի 28- տեղի ունեցան առաջին բախումները իսրայելական ոստիկանության և պաղեստինցիների միջև:

Սեպտեմբերի 29- իսրայելական կառավարությունը զգուշացրեց, որ «կվերագրավի ինքնավար արաբական քաղաքները և կցրի պաղեստինյան ոստիկանությունը, եթե բախումները իսրայելական զինվորների և պաղեստինցիների միջև շարունակվեն:

Հոկտեմբերի 2- Նաթանյահուն, Արաֆաթը, Հուսեյնը և Քլինթոնը հադիպեցին Սպիտակ տանը քննարկելու խաղաղության գործընթացի հետ կապված հարցերը:

Հոկտեմբերի 12- Նաթանյահուն հայտարարեց, որ ցանկանում է դուրս բերել իսրայելական զորքերը Հեբրոնից:

Հոկտեմբերի 20- բանակցությունները Իսրայելի և պաղեստինյան ղեկավարների միջև նորից կասեցվեցին:

Նոյեմբերի 28- ՄԱԿ-ի 126 անդամներ պահանջեցին վերջ տալ հրեական բնակավայրերի ընդարձակմանը արևմտյան ափում:

1997թ.

Հունվարի 15- Հեբրոնի համաձայնագրի ստորագրումը:

Փետրվարի 26- իսրայելական կառավարությունը որոշեց արևելյան Երուսաղեմում կառուցել նոր բնակավայրեր հրեաների համար:

Մարտի 15- Արաֆաթը Ղազայում կոնֆերանս հրավիրեց, որին մասնակցեցին ԱՄՆ-ի և որոշ եվրոպական որոշ երկրների ներկայացուցիչներ:

Մարտի 18- Իսրայելական կառավարությունը անտեսելով բողոքները սկսեց շինարարությունը: Մարտի 21- Համասի ակտիվիստներից մեկը ռումբ պայթեցրեց Թել Ավիվի սրճարաններից մեկի ծառուղում՝ սպանելով 3 մարդու: Նույն օրը տեղի ունեցավ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի նիստ:

Ապրիլի 26- ՄԱԿ-ը առաջարկեց բանաձև, որը իսրայելական կառավարության կողմից արևելյան Երուսաղեմում հրեական

նոր բնակավայրերի կառուցումը որակում էր որպես անօրինական և կոչ էր անում անմիջապես դադարեցնել այն:

Մարտի 30- արաբական երկրները հրավիրեցին Արաբական Լիգայի երկրների համաժողով: Լիգայի 22 անդամներ քվեարկեցին Իսրայելի հետ կապերը դադարեցնելու օգտին:

Հուլիսի 30- երկու ահաբեկիչներ Երուսաղեմի Մահանե Եհուդա շուկայում ահաբեկչական ակտ կատարեցին, որի արդյունքում զոհվեցին 13 և վիրավորվեցին 170 մարդ:

Հոկտեմբերի 8- Արաֆաթը և Նաթանյահուն, որոնք չէին հանդիպել դեռ փետրվարից, հանդիպեցին և հայտարարեցին բանակցությունների վերսկսման մասին:

Դեկտեմբերի 1- իսրայելական կառավարությունը 900 բնակարաններ տրամադրեց հրեա նորաբնակներին, թեև ԱՄՆ-ի կառավարությունը դիմել էր Իսրայելին չկատարել այդ քայլը:

1998թ.

Հունվարի 1- իսրայելական բանակը հայտնաբերեց Եգիպտոսից մինչև Ղազա գաղտնի կերպով փորված երկու թունելներ, որոնցով կատարվում էին զենքի մաքսանենգություններ:

Հունվարի 4- Իսրայելի արտգործնախարար Դեվիդ Լեվին հայտարարեց, որ Նաթանյահուն անտեսում է իսրայելական հասարակական կարծիքը, ինչպես նաև աղքատության և գործազրկության աճող պրոբլեմները:

Հունվարի 20- Քլինթոնը երկու անգամ հանդիպում ունեցավ Իսրայելի վարչապետի հետ:

Հունվարի 22- Արաֆաթը հանդիպեց Քլինթոնի հետ, որը Արաֆաթին ներկայացրեց զուգահեռ գործողությունների իրականացման ծրագիր՝ Իսրայելը կատարում է դուրսբերում, իսկ պաղեստինցիները միաժամանակ քայլեր են ձեռնարկում ահաբեկչության դեմ:

Մարտ- արևմտյան ափում տեղի ունեցան նոր բախումներ իսրայելական զորքերի և պաղեստինցիների միջև, որի արդյունքում զոհվեցին 3 և վիրավորվեցին տասնյակ պաղեստինցիներ:

Մարտի 20- ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը հայտարարեց, որ տարածաշրջանում խաղաղության բրոկերը ԱՄՆ է և ոչ մի այլ երկընտրանքային ծրագիր չկա:

Ապրիլի 1- Իսրայելը հայտարարեց, որ պատրաստ է վերսկսել բանակցությունները:

Ապրիլի 20- Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյերը հայտարարեց, որ ճիշտ կլինի, եթե բանակցությունները վերսկսելու համար ԱՄՆ-ը կողմերին հրավիրի Լոնդոն:

Մայիսի 4- իսրայելական և պաղեստինյան պատվիրա կությունները ժամանեցին Լոնդոն: Նրանք հայտարարեցին, որ խաղաղության գործընթացը վերակենդանացված է :

Ապրլի 6- լոնդոնյան հանդիպումները անարդյունք վերջացան:

Օգոստոսի 8- ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան քվեարկեց հօգուտ բանաձևի, որը պաղեստինցիներին տալիս էր քվեարկելու իրավունքից զուրկ ՄԱԿ-ի անդամի կարգավիճակ:

Օգոստոսի 10- Նաթանյահուն հայտարարեց, որ համաձայն է ընդունել ԱՄՆ-ի առաջարկը 13.1 տոկոսի շուրջ, բայց այն պայմանով, որ պաղեստինցիներին վերադարձվելիք արևմտյան ափի 13.1 տոկոսից 3 տոկոսը դարձվի ազգային արգելանոց և արգելվի պաղեստինցիներին այնտեղ կառուցումներ կատարել:

Հոկտեմբերի 5- ԱՄՆ-ի պետքարտուղար Օլբրայթը ժամանեց Մերձավոր Արևելք՝ նախապատրաստելու հոկտեմբերի 15-ի Վաշինգտոնյան գագաթաժողովը:

Հոկտեմբերի 15- ԱՄՆ-ի նախաձեռնությամբ, Մերիլենդ նահանգում, Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող Ուայ-Փլանթեյշն վայրում, սկսվեցին բանակցությունները ՊԱԿ-ի ղեկավար Յասեր Արաֆաթի և Իսրայելի վարչապետ Նաթանյահուի միջև:

Հոկտեմբերի 19- պաղեստինցի ծայրահեղականի կողմից իսրայելական Բերսեբա քաղաքում կատարված ահաբեկչությունից հետո Իսրայելը հայտարարեց, որ հետ կկանգնի բանակցություններից:

1998թ. հոկտեմբերի 22- Ուայ-Փլանթեյշնի համաձայնագրի ստորագրումը:

Նոյեմբերի 3- իսրայելական կառավարությունը հետաձգեց պայմանագրի հաստատումը:

Նոյեմբերի 12- Իսրայելի կառավարությունը. հաստատեց այն:

Նոյեմբերի 20- իսրայելական կառավարությունը սկսեց զորքերի դուրսբերումը և պաղեստինցիներին սկզբում հանձնվեց 195 մղոն[2]

[35 էջ]

տարածք, ինչպես նաև ազատ արձակվեց 250 բանտարկյալ:

1999թ.

Սեպտեմբերի 4- ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնի ջանքերով ստորագրվեց Շարմ էլ-շեյխի մեմորանդումը Իսրայելի և ՊԱԿ-ի միջև:

2000թ.

Հուլիսի 11-14- Քեմփ Դևիդում Քլինթոնը հանդես եկավ Իսրայելի և ՊԱԿ-ի միջև վերջնական պայմանագիր կնքելու շուրջ առաջարկություններով:

Դեկտեմբերի 24- Քլինթոնը հանդես եկավ նոր առաջարկությամբ՝արլ. Երուսաղեմը բաժանել մուսուլմանական, հայկական կամ քրիստոնեական և հրեական մասերի: Իսրայելը զիջելու էր արևմտյան ափի 90%-ը, եթե Երուսաղեմը և Մեռյալ ծովը համարվեն արևմտյան ափի մաս:100.000 պաղեստինցի փախստականներ վերադառնալու են Իսրայել, իսկ մնացածը՝ Ղազա և արևմտյան ափ: Այդ դեպքում Իսրայելը զիջելու է արևմտյան ափի 95%-ը, որի դիմաց ստանալու է արևմտյան ափի հրեական բնակավայրերի զբաղեցրած տարածքները:

2001թ.

Հունվարի 21- եգիպտական Թաբա քաղաքում Քլինթոնը վերջին անգամ փորձեց կողմերին նստեցնել հաշտության սեղանի շուրջ: Սակայն իսրայելական կողմը իր պահանջները ներկայացրեց 3 ոչերի տեսքով՝ Իսրայելը ոչ մի պայմանով չի համաձայնի պաղեստինյան փախստականների վերադարձին, չի թողնի Հարամ-աս-Շարիֆը արևելյան Երուսաղեմում, արևմտյան ափում և Ղազայում կպահպանի հրեական բնակավայրերի 80%-ը:

2002թ.

Հունվար- մարտ- իսրայելա-պաղեստինյան զինված բախումներ Ղազայի հատվածում և արևմտյան ափում:

Մարտ 13- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը ընդունեց 13/907 բանաձևը, որտեղ Պաղեստինը անվանվում էր պետություն:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0065218

A II
87031